\+ 26.02.15 31.12.18

25

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
Ք. ԱԲՈՎՅԱՆ, ՓԵՏՐՎԱՐԻ ՔՍԱՆՎԵՑԻՆ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆԻ

26.02.2015թ.

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ,*
Իրավաբանական հասցեն՝ ք. Աբովյան, Բարեկամության 1,
*ի դեմս Աբովյան համայնքի ղեկավար Կ. Գուլոյանի*, որը գործում է համաձայն կանոնադրության, *այսուհետ «ՎԱՐՁԱՏՈՒ» մի կողմից,*
և

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ*
ի դեմս ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող /Իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Հալաբյան 41/ա/ Միհրան Պողոսյանի, որը գործում է համաձայն կանոնադրության, որի կողմից 06.02.2015թ. տրված լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ՝
ՀԱԿՈԲ ՍՈՒՐԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԸ, ծնված՝ 04.06.1970թ.,
Անձնագիր AE 0646458 տրված 05.08.2000թ. 049-ի կողմից, վավերական է մինչև 05.08.2015թ.,
Բնակվող ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, շենք 6, բն. 32, *այսուհետ «ՎԱՐՁԱԿԱԼ» մյուս կողմից,*

Կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 15.01.2015թ. թիվ 8-Ա որոշումը, սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող ***Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Բարեկամության հրապարակի թիվ 1 հասցեում գտնվող քաղաքապետարանի վարչական շենքի առաջին հարկից 186,1քմ/մեկ հարյուր ութսունվեց ամբողջ մեկ/ մակերեսով տարածքը,*** այսուհետ «Անշարժ գույք», որի սխեմատիկ հատակագիծը կցվում է պայմանագրին և համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:
Քաղաքապետարանի ընդհանուր մակերեսը՝ 7775.6քմ/յոթ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ ամբողջ վեց/, որը գտնվում է 1,0հա/մեկ/ անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրված հողամասի վրա:
1.2. Անշարժ գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով, ըստ ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի տարածքային ստորաբաժանման կողմից *05.08.2003թ. տրված 1704772* սեփականության իրավունքի գրանցման վկայականի:
1.3. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Սարքերի միավորված ստորաբաժանման տվյալների համաձայն *«Անշարժ գույքի» նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան,* ինչը հավաստվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի *«Աբովյան» սպասարկման գրասենյակի* կողմից *տրված թիվ US-19022015-07-0205* միասնական տեղեկանքով: Տեղեկանքում տվյալները լրացված են 19.02.2015թ. դրությամբ:
Անշարժ գույքը ծանրաբեռնված է վարձակալություններով:
1.4. Վարձատուն Անշարժ գույքը հանձնում է վարձակալության *աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով:*
1.5. Վարձակալության հանձնված Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:
1.6. Սույն պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի ընթացքում Վարձատուն Անշարժ գույքի նկատմամբ չունի տիրապետման և օգտագործման իրավունք:
1.7. *Վարձակալը չի կարող ենթավարձակալության տալ վերոհիշյալ Անշարժ գույքը կամ այլ ձևով օտարել դրա օգտագործման իրավունքը:*
1.8. Սույն պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կամ պայմանագրի լուծումը կատարվում է կողմերի գրավոր համաձայնությամբ՝ վավերացված նոտարի կողմից կամ դատարանի վճռով:
1.9. Սույն պայմանագրով կողմերի չնախատեսված այլ պարտավորությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. *ՎԱՐՁԱՏՈՒՆ իրավունք ունի՝*
2.1.1. ՎԱՐՁԱԿԱԼԻՑ պահանջել Անշարժ գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Անշարժ գույքի նշանակությանը համապատասխան.
2.1.2. ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը.
2.1.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե ՎԱՐՁԱԿԱԼԸ Անշարժ գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Անշարժ գույքի նշանակությանն անհամապատասխան.
2.2. *ՎԱՐՁԱՏՈՒՆ պարտավոր է՝*
2.2.1. Անշարժ գույքը վարձակալին հանձնել սույն պայմանագիրը ստորագրելու պահից՝ 10 (տասը) օրվա ընթացքում.
2.2.2. Անշարժ գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Անշարժ գույքի նշանակությանը համապատասխան ;
2.2.3. Անշարժ գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով
2.2.4. Իր հաշվին կատարել Անշարժ գույքի հիմնական վերանորոգումը.
2.2.5. ՎԱՐՁԱԿԱԼԻՆ նախազգուշացնել Անշարժ գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավ., սերվիտուտ և այլն) մասին.
2.3. *ՎԱՐՁԱԿԱԼՆ իրավունք ունի՝*
2.3.1 Այլ կազմակերպությունների հետ կնքել պայմանագրեր վարձակալված Անշարժ գույքը սպասարկելու և էներգետիկ կամ այլ միջոցներով ապահովելու վերաբերյալ ;
2.4. *ՎԱՐՁԱԿԱԼԸ պարտավոր է՝*
2.4.1. Ժամանակին մուծել Անշարժ գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3 կետում նախատեսված վճարը (վարձավճարը).
2.4.2. Անշարժ գույքը պահպանել պատշաճ վիճակում , իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Անշարժ գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.
2.4.3. Սույն պայմանագրի ժամկետը լրանալուց հետո վարձակալվող Անշարժ գույքը ենթակա է վերադարձման «Վարձատուին» այն վիճակով, ինչպես հանձնվել է՝ հաշվի առնելով նրա բնականոն մաշվածությունը.
2.4.4. Շրջապատը պահել մաքուր վիճակում.
2.4.5. Կատարել բոլոր անհրաժեշտ վճարումները
2.4.6. ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել իրեն տրամադրել Անշարժ գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.
2.4.7. Անշարժ գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ
ա/ ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել անհատույց վերացնելու Անշարժ գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Անշարժ գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.
բ./ ՎԱՐՁԱՏՈՒԻՆ նախապես տեղեկացնելով վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը.
գ/ Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը.
դ/ Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Անշարժ գույքի վիճակը վատթարացել է.
ե/ Պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.
զ/ Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.4.8.ՎԱՐՁԱՏՈՒԻ կողմից սույն պայմանագրի 2.2.4. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում, պահանջել նվազեցնելու վարձավճարը:
2.4.9. Սույն պայմանագրի ձևակերպման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձակալի կողմից:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

*3.1. Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 31.12.2018թ/երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի երեսունմեկը/ և ուժի մեջ է մտնում սահմանված կարգով վարձակալի իրավունքները ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում իրավունքների պետական գրանցման պահից:*
*3.2 Վարձավճարի չափը կազմում է ամսական 58 000/հիսունութ հազար/ ՀՀ դրամ, որպես տարածքի և սպասարկման վարձավճար:*
*3.3. ՎԱՐՁԱԿԱԼԸ վարձավճարը փոխանցում է Վարձատուի հաշվեհամարին` թիվ 900105201322:*

### 4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
4.2.Տուժանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:
4.3.ՎԱՐՁԱՏՈՒՆ պատասխանատվություն չի կրում Անշարժ գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել ՎԱՐՁԱԿԱԼԻՆ կամ պետք է ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից հայտնաբերվեին Անշարժ գույքը զննելիս կամ Անշարժ գույքը վարձակալության հանձնելիս , դրա սարքինությունը ստուգելիս:

### 5.ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

5.1.Վարձակալած գույքից ՎԱՐՁԱԿԱԼԻ կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:
5.2. Եթե Վարձակալը իր միջոցների հաշվին կատարել է վարձակալված գույքից անբաժանելի բարելավումներ առանց դրան վնաս պատճառելու , ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունքն ունի հատուցում ստանալ Վարձատուից այդ բարելավումների արժեքի չափով:
5.3.ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից առանց ՎԱՐՁԱՏՈՒԻ համաձայնության կատարված վարձակալած Անշարժ գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:
5.4.Վարձակալած գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի , այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են ՎԱՐՁԱՏՈՒԻ սեփականությունը:

### 6.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1.Սույն պայմանագիրը ժամկետից շուտ կարող է լուծվել ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:
6.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:
6.3. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե`

- Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել գույքը պայմանագրի պայմաններին կամ նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

### 7.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա է գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում` 30 (երեսուն) օրյա ժամկետում:
7.2.Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից և վավերացված է նոտարական կարգով:
7.3. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ ցանկացած այլ ժամկետում:
7.4.Կողմերի անվանման գտնվելու վայրի բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են եռօրյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:
7.5.Սույն պայմանագիրը կողմերի համաձայնությամբ կազմված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է Նոտարի մոտ, իսկ մյուս օրինակները տրվում է կողմերին:
7.6. Պայմանագիրը նոտարի կողմից ընթերցվեց կողմերին: Պայմանագրի բովանդակությունը համապատասխանում է նրանց պահանջներին:

«ՎԱՐՁԱՏՈՒ»

«ՎԱՐՁԱԿԱԼ» ֆիզ. անձ

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ ՔՍԱՆՎԵՑԻՆ
անշարժ գույքի վարձակալության սույն պայմանագիրը վավերացված է իմ` ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտար *Նունե Մանուչարյանի* կողմից:
Կողմերը վարձակալության պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը , ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը և անշարժ գույքի նկատմամբ *ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ* սեփականության իրավունքը ստուգված է: Ստուգված է նաև լիազորված անձի լիազորությունները:
ՀՀ քաղ. օր. 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 30 (երեսուն) օրյա ժամկետում:

Գրանցված է սեղանամատյանում 555 ով
Գանձված է պետ. տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետ.տուրքի մասին և Նոտարիատի մասին» օրենքների
Նոտար

**Նոտարական ակտի կոդ:** 600-20170811-117-1597329
**Նոտարական ակտի գաղտնագիր:** T4L1RL

***ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
Ք. ԱԲՈՎՅԱՆ, ՕԳՈՍՏՈՍԻ ՏԱՍՆՄԵԿԻՆ 11.08.2017թ.
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՅՈԹ ԹՎԱԿԱՆԻ

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ,***
Իրավաբանական հասցեն՝ ք. Աբովյան , Բարեկամության 1,
Ի դեմս Աբովյան համայնքի ղեկավար ՎԱՀԱԳՆ ԺԻՐԱՅՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ծնված՝ 08.12.1975թ, որը գործում է համաձայն կանոնադրության,
Անձնագիր՝ AK 0531349 տրված 15.06.2010թ 019-ի կողմից,
Բնակվող՝ ք. Աբովյան, Սարալանջ փողոց, 26 շենք, բն. 32, այսուհետ «ԿՈՂՄ-1» մի կողմից,
ԵՎ
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ***
Ի դեմս՝ ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ՀՀ Գլխավոր հարկադիր կատարող /Իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Հալաբյան 41/ա/ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, որը գործում է համաձայն կանոնադրության, որի կողմից 08.06.2017թ. տրված լիազորագրով հանդես է գալիս լիազորված անձ՝
**ՀԱԿՈԲ ՍՈՒՐԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԸ**, ծնված՝ 04/06/1970թ-ին, ՀԾՀ՝ 1414700202, նույնականացման քարտ՝ 006974216, տրված՝ 049-ի կողմից, 23/07/2015թ-ին, հաշվառված՝ ԿՈՏԱՅՔ, ՀՐԱԶԴԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, 6 Ճ, 32ԲՆ , այսուհետ «ԿՈՂՄ-2» մյուս կողմից,
ԿՆՔԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ
1.1. Հիմք ընդունելով 30.10.2016թ, Աբովյանի քաղաքապետի և ՀՀ ԴԱՀԿ ծառայության գլխավոր հարկադիր կատարողի լիազ. անձ՝ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ կողմից կնքված Պայմանագրի փոփոխման և լրացումներ կատարելու համաձայնագիրը , կողմերը փոխհամաձայնությամբ որոշեցին փոփոխության ենթարկել "Անշարժ գույքի մասի վարձակալության պայմանագիրը", վավերացված 26.02.2015թ., Կոտայք նոտարական տարածքի նոտար Նունե Մանուչարյանի կողմից, ռե. 555, հետևյալ կերպ՝
ա /Պայմանագրի3.2. կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

***-3.2. Վարձավճարի չափը կազմում է տարեկան 1 157 000/մեկ միլիոն հարյուր հիսունյոթ հազար/ ՀՀ դրամ՝ որպես տարածքի և սպասարկման վարձավճար: Վճարումները կատարվել են սկսած վերը նշված*** **համաձայնագրի կնքման օրվանից՝ 30.10.2016 թվականից:**
1.2. Գույքը պատկանում է Կողմ-1-ին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի տարածքային ստորաբաժանման կողմից 05.08.2003թ, տրված թիվ 1704772 սեփականության իրավունքի գրանցման վկայականով:
1.3. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մարզերի միավորված ստորաբաժանման տվյալների համաձայն «Անշարժ գույքի»՝ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Բարեկամության հրապարակ թիվ 1 /մեկ / քաղաքապետարանի վարչական շենքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան, ինչը հավաստվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Աբովյան» սպասարկման գրասենյակի կողմից տրված թիվ ՄՏ -07082017-07-0049 միասնական տեղեկանքով: Տեղեկանքում տվյալները լրացված են 07.08.2017թ. դրությամբ: Անշարժ գույքը ծանրաբեռնված է վարձակալություններով՝ ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության աշխատակազմ հիմնարկ՝ 634,9քմ/վեց հարյուր երեսունչորս ամբողջ ինը/, ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն՝ 234,52քմ/երկու հարյուր երեսունչորս ամբողջ հիսուներկու/, Հայաստանի Հանրապետություն՝ 75,71քմ/յոթանասունհինգ ամբողջ յոթանասունմեկ/, Կոտայքի գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոն ՓԲԸ՝ 105,59քմ/մեկ հարյուր հինգ ամբողջ հիսունինը/, ՍՏՈՒՅԳ ՍՊԸ՝ 37,3քմ/երեսունյոթ ամբողջ երեք/, ԵՎՐՈՎԵՐԱԼԱԿ ՍՊԸ՝ 15,35քմ/տասնհինգ ամբողջ երեսունհինգ/, Հայաստանի պատանեկան նվաճումներ ՀԿ՝ 34,2քմ/երեսունչորս ամբողջ երկու/, ԲՈՒԼԱՐՍԵՐՎԻՍ ՍՊԸ՝ 17,4քմ/տասնյոթ ամբողջ չորս/, ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ հիմնարկ՝ 952,29 քմ/ինը հարյուր հիսուներկու ամբողջ քսանինը/, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն՝ 186,1քմ/մեկ հարյուր ութսունվեց ամբողջ մեկ/: Սեփականության իրավունքի գրանցման վկայականում գծագրված հողամասի պարագծային չափերն ու մակերեսը չեն համապատասխանում կադաստրային քարտեզի տվյալներին: Համաձայն կադաստրային քարտեզի նշված հղամասի մակերեսը կազմում է 0,9956hա: Օտարման գործարքների դեպքում անհրաժեշտ է ներկայացնել 1,0hա հողամասի իրադրության հատակագիծ՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից և համապատասխան գրություն կադաստրային քարտեզում ուղղում կատարելու վերաբերյալ:
2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրելուց հետո կատարված փոփոխությունները անշարժ գույքի կադաստրում գրանցելու պահից:

3.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1. Սույն համաձայնագրով կողմերի չնախատեսված այլ պարտավորությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով
3.2. Համաձայնագրի հետ կապված ծախսերը կատարվում են «ԿՈՂՄ-2» -ի կողմից:
3.3. Սույն համաձայնագիրը կողմերի ցանկությամբ կնքված է հայերեն լեզվով, 3/երեք/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:
3.4. Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա է գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմունքում 30 (երեսուն) աշխատանքային օրյա ժամկետում:
3.5. Համաձայնագիրը նոտարի կողմից բարձրաձայն ընթերցվեց կողմերին: Պայմանագրի բովանդակությունը համապատասխանում է նրանց պահանջներին:

«ԿՈՂՄ-1»`

«ԿՈՂՄ-2»`

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՅՈԹ ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ ՏԱՍՆՄԵԿԻՆ
սույն համաձայնագիրը վավերացվել է իմ` ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտար` Նունե Մանուչարյանիս կողմից:
Պայմանագիրը փոխելու սույն համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը ստուգված է , գործունակությունը` պարզված: Ստուգված է նաև իրավաբանական անձանց իրավունակությունը, լիազորված անձի լիազորությունները:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 301 հոդվածի համապատասխան, սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ըստ գույքի գտնվելու վայրի անշարժ գույքի պետական կադաստրի տարածքային ստորաբաժանումում` 30 աշխատանքային օրյա ժամկետում:

Գրանցված է գրանցամատյանում` ----5076---- ով
Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ` համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Նունե Մարտինի Մանուչարյան